ՎԱՆԵՑԻ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ

Խրիմյան Հայրիկի դասընկեր Գևորգ Խուդավերդյանը պատանեկան տարիներից նվիրվում է նկարչությանը և քանդակագործության արվեստին: Մանկությունից նա սիրել է նկարել և փայտից, ծառի ճյուղերից, տախտակի կտորներից պատրաստել ու քանդակել զանազան խաղալիքներ: Իր այդ աշխատանքներին մանակից է դարձնում իր դասընկերոջը՝ ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Խրիմյան Հայրիկին:

Գևորգի ծնողները տեսնելով, որ իրենց տղան լուրջ հակումներ ունի դեպի նկարչությունը և քանդակագործությունը, որոշում են նրան ուղարկել Կ. Պոլիս՝ մասնագիտական կրթություն ստանալու համար:

Նրանց խրախուսում է նաև Խրիմյան Հայրիկը, որին սիրում և հարգում էին Գևորգի ծնողները:

Վանեցի նկարիչ-քանդակագործ Գևորգ Ալխասի Խուդավերդյանը սովորում է Կ. Պոլսում 1850-1860 թթ.: Այդ տարիների ընթացքում, տարբեր առիթներով Խրիմյան Հայրիկը երբ Վանից մեկնում է Կ. Պոլիս, հանդիպում է իր մտերիմ ընկերոջը՝ Գևորգին: Խրիմյան Հայրիկը, տեսնելով և քննելով Գևորգի նկարչական նոր աշխատանքները, շատ է ուրախանում, որ իր բարեկամն ունի լուրջ հաջողություններ իր ստեղծագործական աշխատանքներում:

Խրիմյան Հայրիկը ոգևորում է Գևորգին, ցանկանում նրան նորանոր ստեղծագործական հաջողություններ իր աշխատանքներում:

Այդ տարիներին Խրիմյան Հայրիկն արդեն ուներ վճռական ազդեցություն Վանում: Նա ուսուցիչ էր և կրթական տեսուչ, բանաստեղծ, խմբագիր, դաստիարակ և հրապարակախոս:

Վանեցի նկարիչ-քանդակագործ Գևորգ Խուդավերդյանը կ. Գոլսում մասնագիտական կրթությունը ստանալուց հետո, վերադառնում է Վան և Խրիմյան Հայրիկի առաջարկությամբ ու խորհրդով ձեռնամուխ լինում տեղի եկեղեցիների, վանքերի, դպրոցների, կրթօջախների վերանորոգման աշխատանքներին, նոր սրբապատկերներ նկարում:

1892 թ. Խրիմյան Հայրիկը երբ ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս, որոշ ժամանակ անց, հատուկ հրավերով, նկարիչ-քանդակագործ Գևորգ Ալխասի Խուդավերդյանին Վանից կանչում է իր մոտ՝ Ս. Էջմիածին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գևորգին ծանոթացնում է իր ապագա ծրագրերին՝ կապված Ս. Էջմիածնի եկեղեցիների, վանքերի վերանորոգման աշխատանքներին:

Նկարիչ Գևորգը մեծ խանդավառությամբ ընդունում է Խրիմյան Հայրիկի առաջարկությունները ու ցանկությունները և իր նպաստը բերում դրանց իրականացմանը:

Տարիներ անց Խրիմյան Հայրիկը, իր խոր ծերության հասակում, Գևորգին խնդրում է նաև, որ նա նախօրոք պատրաստի ու քանդակի իր գերեզմանաքարը: Գևորգի համար Խրիմյան Հայրիկի այդ խնդրանքը լինում է անսպասելի:

Նա իհարկե չի մերժում և ձեռնամուխ է լինում այդ պատվավոր գործին, քանի որ այդ խնդրանքն իրեն առաջարկել էր իր մտերիմ բարեկամն ու ընկերը:

Ներկայումս Ս. Էջմիածնի Մայր տաճարի ավագ դռան առաջ Խրիմյան Հայրիկի շիրիմի վրա տեղադրված տապանաքարը պատրաստել և քանդակել է վանեցի նկարիչ-քանդակագործ Գևորգ Խուդավերդյանը:

Մինչ Խրիմյան Հայրիկի վախճանվելը ավարտելով աշխատանքը, այն թողնում է Ս. Էջմիածնում՝ ի հիշատակ Հայոց Հայրիկի:

Խրիմյան Հայրիկը վախճանվում է 1907 թ., իսկ վանեցի նկարիչ-քանդակագործը՝ 1915 թ. Վանում, գաղթից մեկ ամիս առաջ:

Վանում նկարիչ Գևորգի տունը գտնվում էր Վանի Այգեստանի Խաչփողանում, Գստիկ Բյանդիչի անունով կոչվող աղբյուրի դիմաց: Նրա երկհարկանի տան մեծ սենյակի կենտրոնում դրված էր և այն զարդարում էր նկարիչ Գևորգի ձեռքով նկարված Խրիմյան Հայրիկի մեծադիր նկարը:

Նկարիչ Գևորգը մի առանձին ոգիով նկարում է նաև այդ տարիների Պարսից Շահի մեծադիր դիմանկարը և ուղարկում վերջինիս նվեր:

Գևորգը Պարսից Շահից ստանում է պատասխան նվեր՝ արծաթյա բռնակով սուր, կրծքանշան և պատվոգիր, որոնք Գևորգի տանը պահվել են մինչև 1915 թ.՝ Վանի մեծ գաղթը:

Գևորգն իր ճանապարհորդությունների ժամանակ միշտ իր հետ է վերցնում Պարսից Շահի կողմից իրեն նվիրած կրծքանշանը:

Օրերից մի օր, երբ նա իր ընկերոջ հետ Գոլսից վերադառնում է Վան,

ճանապարհին երկու քուրդ ավազակներ հարձակվում են նրանց վրա ու պահանջում զգեստները հանել, որպեսզի արտաքին շորերը մաքուր մնան արյունից:

Քուրդ ավազակի զենքի սպառնալիքի տակ երբ նկարիչ Գևորգը հանում է վրայի շորերը, նրա կրծքին երևում է պետական կրծքանշանը: Քուրդ ավազակը չփոթվում է՝ տեսնելով կրծքանշանը: Անմիջապես ձայն է տալիս իր մյուս ընկերոջը, որ հանգիստ թողնի Գևորգի ընկերոջը: Նրանք երկուսից էլ ներողություն են խնդրում իրենց արարքի համար և առաջարկում իրենց օգնությունը ու խոստանում, որ նրանց անվնաս և ապահով կհասցնեն իրենց տուն :

Այդպես էլ անում են:

Պարսից Շահի կողմից ստացած կրծքանշանը փրկում է Գևորգի և ընկերոջ կյանքը անխուսափելի մահից:

Երիմյան Հայրիկի և նկարիչ Գևորգի մտերմության հիշողությունների մասին առիթից-առիթ իր կրտսեր եղբորը՝ Հայկին պատմել է Գևորգի ավագ դուստրը՝ Աննա Խուդավերդյանը:

Աննա Խուդավերդյանը, մինչ 1915 թ. դաղթը, Վանում ստացել էր միջնակարգ կրթություն: Դաղթից հետո նա բնակություն է հաստատում Երևանում, սովորում բժշկական քույրերի կուրսերում, որից հետո աշխատանքի է ընդունվում Երևանի ֆիզոթերապիայի հիվանդանոց-ինստիտուտում:

Նկարչական արվեստի շնորհը Գևորգ Խուդավերդյանից փոխանցվում է ընտանիքի մյուս անդամներին: Նկարիչ էր և Գևորգի 5-րդ զավակը՝ Խաչատուրը, ծնված 1900 թ.: Վանում Խաչատուրը երբ իր դասընկերներին ցույց է տալիս իր կատարած փոքր նկարները, դասընկերները ասում են նրան, որ նա տաղանդավոր նկարիչ կդառնա, ինչպես իր հայրն է կամ նկարիչ Փանոս Թերլեմեզյանը:

Խաչատուրի փոքր եղբայրը՝ Ահարոնը, ծնված 1906 թ., նույնպես մանկությունից երազել է նկարիչ դառնալ հոր և ավագ եղբոր նման:

Նկարիչ Ահարոն Գևորգի Խուդավերդյանը նկարչական բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայի Գեղարվեստի ինստիտուտում, որն ավարտել է 1939 թ.:

1966 թ. հունվարից Երևանում, Նկարիչների տանը, բացվում է Ահարոն Խուդավերդյանի հետմահու անցած 30 տարիների նկարչական աշխատանքների անհատական ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվել են նրա տարբեր ժանրերի շուրջ 130 աշխատանքները:

Հիմա Ահարոնի նկարներից 29-ը պահվում են Հայաստանի Պետական պատկերասրահում, իսկ 15 նկարներ՝ Ս. Պետերբուրգի Գեղարվեստի թանգարանում:

Հայկ Խուդավերդյան